

Տարեկան գինը 10 բուրդի կէս տարվան 6 բուրդի  
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».  
Կամ Tiflis, Rédaction «Mschak».  
Տէլէֆոն № 253.

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարար. Թիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են  
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.  
Տէլէֆոն № 253.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ հակողութեան մասին.— Ներքին  
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. չորսը չը կան. երկրա-  
շարժի տեղում. Դատաստանական դահլիճից.  
Երկրաշարժից վնասվածները օգտին. Ներքին  
լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտա-  
քին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱ-  
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայ եւ ռուս  
խոսելիքներ.

## ԴԱՐՁԵԱՆ ՀԱՎԱԳՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՆ

Այն բազմամարդ եւ երկարատեւ նիստե-  
րը, որոնք տեղի ունեն հերկայումս Կով-  
կասեան Կիւղատնտեսական ընկերութեան  
մէջ, լարված ուշադրութիւնը, որով լուր  
են ժողովականները զանազան կարծիքներ,  
ազմկայի վիճարկութիւնները Պատուօրի.  
մշակած եւ ուրիշ մեթոդների մասին,  
ցոյց են տալիս, որ քննվող խնդիրները ու-  
նեն մարդկանց մեծ շրջանի համար էա-  
կան նշանակութիւն: Ժողովին մասնակ-  
ցում են ռուսներ, հայեր, վրացիներ, յոյ-  
ներ, թիւրքեր, ֆրանսիացիներ, գանազան  
վարչական եւ մասնաւոր անձեր: Քննվում  
են մեր երկրի շերամապահութեան վերա-  
բերեալ մի քանի խոշոր խնդիրներ, որոնց  
մասին մենք յիշատակել ենք մեր լրագրի  
մէջ: Մենք պարտք ենք համարում դար-  
ձեալ կանգ առնել այդ առարկայի վրա,  
աչքի առաջ ունենալով, որ ընկերութեան  
եւ շերամապահների մշակած ծրագիրները  
պէտք է կարեւոր նշանակութիւն ունենան  
եւ դառնան բարձր վարչական եւ մասնա-  
գիտական շրջանների ուշադրութեան եւ  
քննութեան առարկայ:

Կնպէս յայտնի է, ներկայումս շերամի  
սերմը քննութեան է ենթարկվում Թիֆ-  
լիսի շերամապահական կայարանում: Ուս-  
տի այդ հիմնարկութեան յայտնած կար-  
ծիքից եւ տուած վիճակներից կախված է

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՀԱՅ ԵՒ ՌՈՒՄ ԻՆՏԵՆՏԻՒՆ

Կարգալով «Մշակի» 13 համարում պ. Լեւոն  
Սարգսեանի յօդուածը Բաղուի հայ ինտելի-  
գենցիայի մասին եւ միանշանակ համաձայն-  
վելով հեղինակի հետ, մենք թոյլ կը տանք  
մեզ մի քանի խօսք եւս աւելացնել հայ ինտե-  
լիգենցիայի վերաբերմամբ ընդհանրապէս, նկա-  
րագրել նրա պատկերը եւ համեմատել նրան  
ռուս ինտելիգենցիայի հետ: Ի հարկէ, խօսքս  
այն փոքրամասնութեանը չէ վերաբերում, որը  
բացառութիւն է կազմում մեր ինտելիգենտ  
հասարակութեան մէջ:

Վերջինք մեր ինտելիգենտին դեռ ուսանո-  
ղական շրջանում: Վերջացնելով միջնակարգ  
դպրոցը, հայ ուսանողը շտապում է մայրաքա-  
ղաք ոչ այնքան դիտութիւն ձեռք բերելու,  
որքան շտապում տառապանք եւ ուսանողական  
կեանքի աղատութիւնը վայելելու համար: Իսկ  
որովհետեւ զիջում ստանալու համար առանձին  
աշխատութեան կարիք չը կայ, մասնաւոր  
կեանքը չէ զարգացնում մեր երիտասարդի մէջ  
սէր դէպի լուրջ աշխատանքը եւ դէպի իր  
մասնագիտութիւնը եւ դրանով պէտք է բացատ-  
րել, որ մեր կրթված հասարակութեան ան-  
շաղկապ կեանքի մէջ նայում են իրանց մաս-  
նագիտութեանը բացառապէս իրեն նիւթա-  
պէս իրանց ապահովացնելու մի միջոցի եւ  
առանց տառանջվելու թողնում են իրանց մաս-  
նագիտութիւնը ու դիմում աւելի հեշտ միջոց-

շատ սերմերի վիճակը: Եթէ կայարանը  
վկայեց թէ այս ինչ սերմը հիւանդ է եւ  
վարակված է, անկասկած դրանով նա վայր  
է գցում սերմի վարկը: Եւ այդպէս էլ  
պէտք է լինի: Վատ սերմը պէտք է դուրս  
շարժվի, ամեն կերպ վնասվի: Սակայն  
կարեւոր է եւ անհրաժեշտ, որ քննվող  
հիմնարկութիւնը, ներկայ դէպքում Թիֆ-  
լիսի շերամապահական կայարանը, կա-  
տարեալ վստահութիւն ներշնչի  
բոլորի մէջ, որ նա արդարեւ անաչառ,  
ճշգրտապէս, լուրջ, ամեն կողմից հեղինա-  
կաւոր մի առեան է, որի եղբայրացութիւն-  
ները եւ դատաւիճիկները արդարութեան  
թելադրութիւններ են: Կիւղատնտեսա-  
կան ընկերութեան ժողովներում պարզվեց,  
որ այդ վստահութիւնը խախտված է եւ  
շերամապահների շրջանում պատմվում են  
զանազան դէպքեր, որոնք անուանարկում  
են հետազոտող հիմնարկութիւնը:

Մենք կարծում ենք, որ խնդիրը մաս-  
նաւոր մի խնդիր չէ, վերաբերեալ մի կա-  
յարանի արտաքին պատւին. եւ ուրեմն  
նրա զեկավարները պէտք է անմիջապէս  
հոգ տանեն վարստելու պտտող կասկա-  
ծները: Մենք չենք կարող հաւատալ, որ  
այնպիսի մի պատասխանատու հիմնար-  
կութիւն, ինչպիսին է Թիֆլիսի շերամա-  
պահական կայարանը, թոյլ տուած լինի  
իրան ոտը կոխել ծուռ ճանապարհի վրա:  
Բայց չը պէտք է բաւականանալ արհա-  
մարհելով այն իրողութիւնները, որ հրա-  
պարակական նշանակութիւն են ստացել,  
այլ նրանք բացատրել է հերքել:

Բազմաթիւ հանգամանքներ թելադրում  
են, որ մեր երկրում չի մտնել շերամի  
սերմի վրա պարտաւոր չէ հսկողու-  
թիւն: Արդիւնազործութեան մէջ այդ-  
պիսի փխրատ սահմանափակում կարող է  
առաջ բերել վտանգաւոր հետեւանքներ:  
Մեր շերամապահութիւնը արդէն սկսել է

ների, ինչպէս ասում են՝ ապագան ապահովե-  
լու համար:

Ռուս ուսանողը, ընտելութիւնից գոյց է ոչ այն-  
քան ընդունակ եւ եռանդուն, բայց հանգիստ  
եւ տոկոս, աւելի է նուիրված իր մասնագի-  
տութեանը, աւելի հիմնովին է ուսումնասի-  
րում նրան եւ պատրաստում իրան ապագայ  
գործունէութեան համար: Խօսեցէք հայ ուսա-  
նողի հետ եւ զուր հիացած կը լինէք նրա գաղա-  
փարներով, նրա իրեալիզմով, բայց... այդ բոլորը  
խօսքեր են, որովհետեւ գործով նա երբեք չի  
ապագայից ձեռք իր այդ իրեալական ձգտում-  
ները: Մինչդեռ այդ վեհ զգացմունքների գոր-  
ծադրելու շատ առիթներ են եղել մեզանում:

Ոչ օտւր, ոչ գաղթականութիւնը եւ ոչ, վեր-  
ջապէս, Ախալքալաքի վերջին աղէտը, չը շար-  
ժեցին մեր երիտասարդութեան սրտերը, չը  
ստիպեցին նրան գործով անմիջապէս օգնութիւն  
հասնել, կարելիին չափ թեթեւացնել նրանց  
վշտերը, սրբել արտասուքը... Այդպէս չէ ըստ  
երեւոյթին ստուր եւ անվերջ ուսումնողը,  
նա աւելի քիչ է խօսում, բայց դէպքը պահան-  
ջած ժամանակ աւելի ընդունակ է զոհաբերու-  
թեան: Պատահում է Ռուսաստանում սով, կամ  
տարածվում է համաճարակ հիւանդութիւն, եւ  
ռուս ուսանողը շտապում է օգնութեան:

Հայը, որ այնքան պարտաճանաչ է իր ըն-  
տանիքի վերաբերմամբ, ինչո՞ւ այնպէս խոր-  
շում է իր հասարակական պարտականութիւն-  
ներին:

Հայը ըստ երեւոյթին գրավող ընաւորութիւն  
պէտք է ունենայ, բայց ինչո՞ւ բացառել, որ  
մեր երիտասարդութիւնը ոչինչով չէ գրաւ-  
վում, ոչ իր մասնագիտութեամբ, ոչ հասարա-  
կական—ազգային սիրով, ոչ սիրով դէպի կինը...  
մեր ամուսնութիւնների ստուրը մեծամաս-  
նութիւնը—հաշուի եւ զատուութեան արդիւնք  
են եւ ոչ սիրոյ ու զգացմունքի:

Ռուս ինտելիգենտ հասարակութեան մէջ,  
ընդհակառակը, օժիտ որսողները, հաշուով տոկոս-  
նացողները, բացառութիւն են կազմում:

վերակերպանալ: Առողջ եւ լաւ յատկու-  
թեան սերմեր սկսել ենք ստանալ թէ  
արտասահմանից եւ որ աւելի եւս ուրա-  
խալի է՝ տեղական սերմնահանքից: Պէտք  
է գնահատել այդ առաջադիմութիւնը եւ  
այնպիսի մի քայլ չանել, որ արդեւ հան-  
գիստնայ սկսված օգտաւէտ գործի ըն-  
թացքի համար: Թող պետութիւնը ընդ-  
հանուր հսկողութիւն ունենայ, թող նը-  
շանակէ գործակալներ եւ ինտորուկտոր-  
ներ շերամապահական արհեստը զարգա-  
ցնելու համար, թող յայտնի կանօններ  
մշակվեն սերմնահանութեան արհեստի  
կազմակերպութեան համար: Այդ բաւա-  
կան է: Սերմի քննութիւնը պէտք է լինի  
կամաւոր եւ շերամապահական կայարանը  
պէտք է լինի միայն իրեն մի հիմնար-  
կութիւն, որին կարող են դիմել ցանկա-  
ցողները եւ նրանց թուում վարչական շըր-  
ջանները՝ կարծիք ստանալու այս կամ այն  
սերմի յատկութեան մասին:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### Մ Ա Մ Ո Ւ Ն

Անցեալ տարի «Մշակը» երկար եւ մանրա-  
մասն խօսեց այն սեւազգեստ հերոսների մա-  
սին, որոնք վանի կրօնափոխութիւնների մէջ  
անջնջելի խայտառակութեամբ ծածկեցին մարդ-  
կութեան անունը եւ մանաւանդ կաթօլիկ պրո-  
պագանդան: Մեր ընթերցողներն անշուշտ յի-  
շում են այդ հերոսներից երկուսին մանաւանդ—  
Ճնորդեանին եւ Շարմիւտեանին: Առաջինը մինչեւ  
այդ անյայտութիւն էր, բայց երկրորդը վերջին  
աղէտների ժամանակից կարողացել էր իրան  
«բարեբար» հռչակել, մարդասէրների գթու-  
թիւնը հրաւերելով հայերի, իբրեւ մարդկանց  
եւ իբրեւ քրիստոնեաների վրա: Մենք մեր-  
կացրինք այդ բարեբարին եւ ցոյց տուինք մեր  
ընթերցողներին, որ արտաքին խաբուսիկ կե-

Մեր ուսանողութիւնը կղզիացած կեանք է  
վարում, չէ չլիվում ուսումնողութեան հետ,  
որից կարող էր իւրացնել նրա լաւ հակում-  
ները. այդ պատճառով էլ վերջացնելով ուսումը  
բարձրագոյն դպրոցում, նա վերադառնում է  
հայրենիք նոյն հողեկան յատկութիւններով,  
ինչպէս որ եկել էր: Ստանալով դիպլոմը, մեր  
ինտելիգենտը շտապում է հայրենիք—գըլ-  
խաւորապէս Բագու, քաջ հաւատալով, որ  
գոյութեան կուի մէջ յաղթող կը հանդիսանայ:  
Կարճ ժամանակամիջոցում նա յարմարվում է  
արդէն չըջապատող հանդամանքներին: Նա չէ  
խորշում հարուստ, բայց անուս վաճառականա-  
կան շրջանից եւ իր լուսամիտ հայեացքները  
այդ շրջանի մէջ տարածելու փոխարէն, ինքն  
է ենթարկվում նրանց աղղիցութեանը: Մինչ-  
դեռ ի պատիւ մեր վաճառականների պէտք է  
ասել, որ նրանք ընդհանրապէս տրամադրված  
են ընդունել ժամանակակից լուսաւոր գաղա-  
փարները. բայց մեր ինտելիգենտը այնպէս  
լուծվում է այդ հասարակութեան մէջ, այնքան  
ընտելանում է, նրանց հայեացքները ու շահերն  
այնքան ընդհանրանում են, որ նա ոչինչով չէ  
զանազանվում իր «պարտօն» վաճառականից:

Հարստանալու նոյն ձգտումները — շահաւէտ  
սպեկուլեցիայի կամ ոչ պակաս շահաւէտ  
ամուսնութեան միջոցով, աղքատ—բանաւոր դա-  
սակարգի նոյնամասն էկզալուստացիան, նոյն  
փարթաւ եւ անըզմանալ կեանքը... Այդո՞ւ  
օգրիւ—հասարակական խնդիրներ, զրախնու-  
թիւն—այլ եւս չեն հետաքրքրում մեր ինտելի-  
գենտին: Նա չէ հետեւում ոչ իր մասնագիտու-  
թեան եւ ոչ ընդհանուր գրականութեանը:

Ռուս ինտելիգենտն էլ (խօսքս մայրաքաղաք-  
ների ինտելիգենցիայի մասին չէ, որոնք կեանքը  
եւ գործունէութիւնը ապրելովում է ընդհա-  
նուր ուսումնական խնդիրներից) այն չէ  
կեանքի մէջ, ինչ որ ուսանողական շրջանում  
հասարակական խնդիրները, գրականութիւնը  
այն չափով արդէն չեն հետաքրքրում: Նրան  
նա մեծ մասամբ իր ազատ ժամանակը նուր-

դէւի սակ թաղնված է կոպէկներով հոգի դնող  
մի սովորական կաթօլիկ վարդապետ: Այժմ  
կարող ենք ասել, որ հ. Շարմիւտեան բոլորովին  
բաց է արել իր «մարդասիրական» դէմքը եւ  
մենք կարող ենք նրա բարոյի ընտանիքը գոյ-  
ները ներկայացնել մեր ընթերցողներին: «С.  
Пет. Вѣд.» լրագրի մէջ բերված է մի կտոր  
Շարմիւտեանի յօդուածից, որ տպված է նրա  
«Oeuvre des Ecoles d'Orient» ամսագրի յուն-  
վար—փետրվար համարում: Ներկայացնելով իր  
գործունէութեան հաշիւը, Ֆրանսիացի հոգեւո-  
րականը առանց այլաւայրութեան ասում է.

«Ամբողջ տասնհինգ դար հայերը յամառու-  
թեամբ մնում էին իրանց «հերձուածի» մէջ  
եւ չէին ուզում ընդունել կաթօլիկ հաւատի  
սուրբ դոգմաները: Վերջապէս, Աստուծու  
համբերութիւնը սպառվեց, եւ նա ուղարկեց  
յամառ հերետիկոսներին արժանի պատիւի  
խմբովին կոտորածների կերպարանքով, որ-  
պէս զի նրանք ճանաչին ճշմարտութիւնը»:

Որքան էլ աշխատենք, չենք կարող արիւ-  
նաների պապականութեան այս պաշտօնայի  
զգվելի սրբապաշտութեան համար արժանի ա-  
նուն գտնել: Բացատրութիւնները աւելորդ էլ  
են. ներկայ դէպքը ոչ առաջինն է, ոչ էլ հա-  
զարերորդը, որ ցոյց է տալիս թէ կաթօլիկ հո-  
գեւորականութիւնը ինչպէս է շահագործում  
սրբազան հասկացողութիւնները, որպիսի ան-  
երեսութեամբ խառնում է Աստուծու անունը  
այնպիսի քստմեկի գործերի մէջ, որոնցից,  
ինչպէս ասված է, դժուար էլ արտուել է ըզ-  
գում: Եւ այդ բանը կատարվում է այժմ. յիշե-  
ցէք թէ որ ժամանակներում ենք տպւում, յիշե-  
ցէք մեր թեւականը, վերջապէս ինչեցէք այն  
երկրը, ուր լոյս են տեսել այդ ամօթալի տո-  
ղերը: Ֆրանսիայի կառավարութիւնը մեր օրե-  
րում անհնապ կուի է յայտարարել կաթօլիկ  
հոգեւորականութեան դէմ, իբրեւ մի վնասա-  
կար տարրի դէմ, եւ ասումպիսիօնականների գոր-  
ծը, որի հետ ծանօթ են մեր ընթերցողները,  
այն մեծ գէնքն էր, որ մինիստրութիւնը գոր-  
ծադրեց Աստուծու անունով ամեն յանցանք

րում է թղթախաղի, իսկ երբեմն եւ արեւոյ-  
ղութեան: Բայց նրա մէջ չը կայ հարստանա-  
լու անվերջ ձգտումը, նա բաւականանում է  
իր ստացած յաճախ շատ աննշան ոտճիկով եւ  
երբեք չէ դիմում ոչ սպեկուլեցիայի եւ ոչ  
շահաւէտ ամուսնութեան միջոցներին: Ռուս  
ինտելիգենցիան միշտ հետեւ է պահում իրան  
վաճառականական շրջանից, եւ պէտք է ասել,  
որ եւ ուսում վաճառականը, այդ համոզված  
պահպանողականը, առանձին համակարգով չէ  
վերաբերվում դէպի ինտելիգենցիան եւ նրա  
լուսաւոր գաղափարները...

Ռուս ինտելիգենտը իր կրտսեր եղբորը չէ  
մոռանում եւ կեանքի մէջ, եւ Ռուսաստանի  
ամենափոքրիկ գաւառական քաղաքում դուր  
միշտ կը գտնէ եւ կիրականօրեայ դպրոց եւ  
ժողովրդական ընթերցանութիւն տեղական ին-  
տելիգենցիայի ղեկավարութեամբ:

Մեր ինտելիգենտը, բացի իր սեփական բա-  
րօրութիւնից, երբեք ոչինչով չէ հետաքրքրվում,  
կրտսեր եղբոր ոչ մտաւոր եւ ոչ տնտեսա-  
կան ինդիւստրիան նրան չէ շարժում...  
Ընդհանրապէս, մենք շատ բան կարող էինք  
սովորել ռուս ինտելիգենցիայից, եթէ աւելի  
մօտ չիվէինք նրա հետ: Զանի որ նա թէ իր  
հողեկան յատկութիւններով եւ թէ կուլտու-  
րայով անպայման աւելի բարձր է մեզանից:  
Եթէ վաթսուսական թականների մեր ինտե-  
լիգենցիան անհամեմատ բարձր էր այժմեան  
մեր ինտելիգենցիայից—դրա պատճառներից  
մէկն էլ այն է, որ նա աւելի մօտ էր ապրում  
ռուս հասարակութեան, ուսում ինտելիգենցիայի  
հետ: Այդ ուղղութեամբ եւ պահպանելով մեր  
ազգային լաւ յատկութիւնները մենք քիչ-քիչ  
կարող էինք ազատվել մեր վերոյիշեալ պակա-  
ւութիւններից, որոնց արմատը մեր անցեալի  
մէջ պէտք է որոնել:

Սօֆիա Դանիէլեւիչ

Գործողութ.





նենայ անգլիացիները պատերազմական միւս գործողութիւնները վրա եւս:

Նիւ-Իորկ: Տրանսպորտի նախկին ընդհանուր հիւպատոսը Լոնդոնում, Մոնտեգի-Ուայտ, երկէ մի ժողովարարի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ առաջ, թէ Կրօնիէի անձնատուրը լինելով պատերազմը դեռ եւս չի վերջանայ եւ նրա վերջը կը գայ միայն այն ժամանակ, երբ կանայք նաեւ Պրետորիան Արտաքին միջամտութեան յոյս չը կայ: Ուայտ չէ կարծում, թէ եւրոպայում կարելի լինի որ եւ չպետութեան վրա յոյս դնել: Միակ միջամտութեան յոյսը Ամերիկայի վրա է: Եթէ նա դործէ վճարողաբար, այն ժամանակ պատերազմը երկու շաբաթում կը վերջանայ, որովհետեւ Անգլիան կարօտ է Ամերիկայի բարեկամութեան:

Բեռլին: Կայսերական սէյմում այսօր վերջացաւ զինուորական բերդիէի երկրորդ ընթերցումը Բեռլինի կառուցութիւնները վերաբերեալ յօդուածը քննելու ժամանակ, Գրէքեր նկատեց, թէ արդէ կերպով է աճում կրէդիտը այդ առարկայի համար: Նա հարցնում է թէ արդեօք այդ աճումը պէտք է պղպտն չարունակել: Զինուորական մինիստրը ասում է, որ Գրէքերի պահանջները զրոյթները եւ ազգայնականութեան աճումը ստիպում են կառավարութեանը անցնել բերդային հաստատուն սխեմային: Աճումը այն չափով, ինչպէս վաղ էր, չի կրնալ: յօդուածը յետոյ կը մտնի Բեռլինական բերդիէի մասին Բեռլինի կառուցութիւնների համար լինելի ծախսը ապա ընդունվեց, ինչպէս եւ ամբողջ բերդիէի:

Խմբագիր ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱՆԴԱՐԱՐ  
Հրատարակիչներ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ  
ԻՍՏԱՆԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԱԴԱՆՈՑ  
**Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ**  
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)  
ա մ ե ն ո Ր, բ ց ի կ ի ռ ա կ ի ո Ր ե ի ծ:  
Ա Ռ Ա Ռ Օ Տ Ե Ր Ե  
Բ. Ա. Նախասարգեան—11—12 ժ. վարարութեան, վերաբերան (սիֆիլիս) և միջատեւ հիւանդ.  
Կ. Մ. Յիկովան—9—10 ժ. աչքի, ներքին և արտաքին.  
Զ. Բարանասեան—11—12 ժ. կանանց և երեխանց հիւանդ.  
Ի. Ֆ. Պրոսանովի—12—1 ժ. արանջի, կոկորդի, քթի և կրծքի.  
Ա. Պ. Կարապետեան—1—1/2 ժ. ներքին և երեխանց.  
Ա. Գ. Դուրկո—1/2—2 ժ. ներքին.  
Ե Ր Ե Վ Ո Տ Ե Ր Ե  
Բ. Ֆ. Պրոսանովի—5—6 ժ.  
Ա. Ն. Շալապովի—6—7 ժ. ներքին (եղբարարութիւն), վերաբերան և մորթի.  
Բ. Ա. Նախասարգեան—7—7 1/2 ժ.  
Վ. Մ. Մախովի—բերդական և խոշորացուցական հետազոտութիւն մէջ, իսկ և արեան վճար 50 կ. չքաւորները ձրի համարադրողի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին.  
Օ. Տ. Ասլանխանի—առնի, ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:  
Հիւանդանոցի վերատեսուչ:  
89—150 Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

**ՄԻ ԱՆՁՆԱԿՈՐՈՒԹԻՒՆ,**  
որ ստացել է բարձրագոյն կրթութիւն, պատրաստում է կրկնում է աշակերտների դասերը միջնակարգ դպրոցների բոլոր առարկաներից: Կարելի է տեսնել ամեն օր ժամը 3-ից մինչեւ 5-ը: Водовозный тушкѣ, домъ № 24 Палаевой, кв. Палаевой. 3—3

Զգուշացէ՛ք Կեղծուքները  
ԱՌՈՂՋԱՊԱՆԱԿԱՆ  
**ԲՈՐՆՕ-ՏԻՄՈՒԵԱՆ ՍԱՊՈՆ**  
Գ: Ֆ. Ի. Ի. Գ. Է. Ն. Ս  
Ոչնչացնում է պեղկները, սեւութիւնը, դեղին բծերը, պղտկները եւ պտուկները եւ ներգործում է աւելորդ քրտնելու դէմ: Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս առաջնային անուշահոտ սապոն, բարձր արժանաւորութեան:  
ՈՍԿԻ ՄԵՂԱՆ 1893 թ. համար:  
Կտորի գինը 50 կ., 1/2 կտորի 30 կ.:  
Ծախվում է բոլոր ամենալաւ գեղարդական մազալվաններում եւ գեղատեսիլում:  
Գլխաւոր պահանջը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Ի. Ի. Գ. Է. Ն. Ս-ի վրայում: Դէպք, Թիֆլիսում, Ալմաթիում, Դոմո, Գեղարդական ապրանքների առեւտրի կովկասեան ընկերութեան մէջ, Մոսկովի և Գրիշնակի, պ. պ. Պոպովների եւ Արիտակովի մօտ: М. 192812 5—24

**ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՄԻ ՄԱՍԱԺԻՍՏԱՎ**  
ՕՐԻՈՐԴ ՆՈՒՆԵ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳՕԼՕՇԵԱՆ  
Հասցէն Краснoгoрскaя ул. № 14. 3—20

**ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ**  
Ուրբաթ, փետրվարի 18-ին,  
ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄԵՆ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՑԹ  
Պ. պ. անդամների, կանգնողների եւ նրանց ընտանիքների համար, հալոց գրամատիքական ընկերութեան արտոնները՝ բարեհաճ մասնակցութեամբ տրվելն Սաթեմիկ Զիչկեանի, կը ներկայացնեն

**I. ԱՆՄԵՂ ՄԵՂԱԿՈՐՆԵՐ**  
Կօմ. 4 գործ. հեղ. Օստրովսկու:  
**II. ՎՈՑ ԳԻՐ ՎԵՂԵՐ** (ժողովրդի)  
Տեղերի գինը 20 կ. մինչեւ 1 բութի:  
Սկիզբը 8 1/2 ժամին երեկոյեան:

Շաբաթ, փետրվարի 19-ին,  
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՆՆԻՃՈՒՄ,  
ի ն պ ա ս տ Ս զ յ լ ա կ ի ձ Ր ի եւ է ժ ա ն ա գ ի ն ճ ա շ ա Ր ա ն ի

- կը արվի գրականական եւ երաժշտական երեկոյ:  
I. Կ Օ Ն Ե Ր ա յ յ ի ն բ ա ժ ա ն մ ռ Ն Ե, օրիորդներ՝ Ա. Օ. Բօրիսենկո-Լենակայի, Ա. Ի. Տուրանովի եւ պ. պ. Մ. Տ. Վախովի, Պ. Մ. Գորիսանովի եւ Գ. Մ. Փոլոյնովի մասնակցութեամբ:  
II. „Предложение“, Կոմէդիա-հանաք 1 գործողութեամբ, հեղ. Չէխովի, մասնակցութեամբ տ. Ն. Ա. Վլադիմիր եւ պ. պ. Պ. Ա. Օպոչինի եւ Վ. Ն. Պախովի:  
III. „Изъ-за мышки“, Կոմէդիա 1 գործողութեամբ, հեղ. Բօրիս, մասնակցութեամբ օր. Ն. Ա. Պապայանի եւ պ. Վ. Լ. Վլադիմիր:  
Սկիզբն է 9 1/2 ժամին:  
Ն ե Ր կ ա յ ա ջ մ ա ն վ ե Ր ջ Ե կ ը ի ն ե ն Պ Ա Ր Ե Ր  
Տօմասները 5 ր. 10 կ. մինչեւ 2 ր. 10 կ. կարելի է ստանալ, Մ. Վ. Մօլիանովի (Սեքզիլիակայա եւ Լեւոնտովիկայա փողոցների անկիւն, սեկական տուն). պարերկրային համար տոմասները 2 ր. 10 կ. կը ծախվեն ժողովարանի գաշիճի մուտքի մօտ: 1—2

**ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՄԵՆԱԿ**  
«Մ Ի Զ Ն Ո Ր Դ»  
(Посредникъ)  
**Դ. Ի. ԵՆԿԻՄՈՎԻՉԻ**  
Պուշկինեան պատմ., Թամաշևիկի քարավանաւորայի հանդէպ:  
Հրաւիրում է պ. պ. տանտերերին հաղորդել մանրամասն հասցէ աղատ ընակարանների (քրա համար վերջում է 20 կօպ.), որ շատ զիւրկութիւն կը պատճառէ թէ տանտէրերին եւ թէ ընակարան վարձողներին: Այդ նպատակով պատրաստված է մանրամասն ցուցակ: Գրանահանում կայ աղատ ընակարանների մեծ ցուցակ: Ցանկացողները թող դիմեն գրանահանակ: № 1. 0—10

**ՎՐԱՑ ԱՂՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ**  
Հինգշաբթի, փետրվարի 17-ին, հայ գերասանական ընկերութիւնը, ի պատիւ. ս. Վարդանանց տօնի, կը ներկայացնէ  
Վ ե Ր ջ ի ն ա ն գ ա մ  
I  
**Ա. Ր Շ Ա. Կ Բ.**  
Պատմ. ողբերգ. 5 արարած, հեղ. Խ. Կալիպանի:  
II  
**ՍԻՐԱՆԱՐԸ ՄԵՂԱՆԻ ՏԱԿ**  
Վօր. մէկ գործ, հեղ. Բ. Բամախանյի:  
Կը մասնակցէ ամբողջ դերասանական խումբը:  
Ս կ ի զ Ե ն է 8 ժ ա մ ի ն  
Տոմասները վաճառվում են թատրոնի (16, 17) կառայում: 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ  
Հինգշաբթի, փետրվարի 18-ին, նշանակված է  
**ԴԻՄԵԿԱՆԵՆԴԻՍ**  
Զինուորականները պէտք է լինեն ընդունված զգեստով, իսկ ոչ-զինուորականները՝ ֆրակով կամ սեւ սերտուկով: Զենուորները պարտաւորական են բոլոր պարտքների համար:  
Ուրբաթ, փետրվարի 18-ին, ներկայացուցնում է նրանից յետոյ ընտանեկան երեկոյթ:  
(16-ին եւ 17-ին) 2—2

Թիֆլիսի Գաղաքային Վարչութիւնը որոշում յայտարարում է, թէ նրա դիւանատան մէջ ներկայ 1900 թ. փետրվարի 17-ին, ժամը 12-ին, նշանակված է աճուրդ կապտով տալու քաղաքային կէտերի արդիւնքը, որ գըտնվում է Թիֆլիսի 9-րդ քաղաքամասում, այնտեղ, ուր միանում են Աւստրիան եւ Անգլիայի սկայա փողոցները, նոյնպէս կապտով տալու քաղաքային տեղը, որ գտնվում է այդ կէտերից փողոց ինչ ներքեւ եւ որի վրա գտնվում է մի փայտաշէն փողոցի կրպակ պտուղների ծախելու համար: Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագրեր վարչութեան 4-րդ բաժանմունքում, բոլոր լի օրերը ժամը 9-ից մինչեւ երկուսը: 3—3

**ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ**  
ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԱՍԱՆ ԲԱՐՁՐ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔ (9—11 տարեկան) եւ I ԴԱՍԱՏՈՒՆ (10—12 տարեկան) մտնելու քննութիւնները նշանակված են այս տարվայ ԱՊՐԻԼԻ 25-ին եւ 28-ին: ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԱՍԱՆ ՍՏՈՐԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔԸ երեխաներն ընդունվում են 8 տարեկան հասակից ԱՌԱՆՑ ԲՆԵՈՒԹԵԱՆ:  
ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԸ ուսման համար—ստորին դասարանական—80 ր., բարձր դասարանական—100 ր., առաջին դասարանում—120 բութի:  
ՈՒՍՄԱՆ ՍԿԵԲԸ ԱՅՍ ՏԱՐԱԿԱՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ:  
Ընթացաւորների իրաւունքները—1) Զինուորական ծառայութեան մէջ առաջին կարգի արտոնութիւն ունեն, 2) ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՑՆԵՐ ՄՏԵՆՈՒ եւ պետական ծառայութեան մէջ ունեն Բէալի ուսումնարանն աւարտողի իրաւունք, 3) ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԲՈՂՈՐ ԸՆԹԱՑԱԽԱՐՏՆԵՐԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ անհնազան պատուաւոր քաղաքացու կոչումն եւ բացի դրանից ուսման մէջ առանձին առաջադիմութիւն ցուցն ուսուցիչները արժանանում են «ԱՌԵԻՏՐԻ ԿԱՆԻԴԱՏԻ» կոչման եւ պարգևատրվում են ՈՍԿԵԱՑ եւ ԱՐՄԱԹԵԱՑ մեդալներով:  
ԽՆԴԻՐՆԵՐՆ յանուն դպրոցի դերեկտօր **ՍՏԱՍԿԻ ՍՕՎԵՏՆԻԿ ՄԱԿՍ Օ. ՍԻՊՈՎԻՉ ՖԻՇԵՐԻ** կոչման, ծաղկի եւ մեդալական վկայականների հետ միասին ընդունվում են ամեն օր, առաւօտեան 11—12 ժամին ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԿՕՄԻՏԵՏԻ ԴԻՄԱՆԱՍԱՆ ՄԵՋ (Սեքզիլիակայա, տուն № 1): Նոյն ժամանակ էլ ԶՐԻԱԲԱՐ կարելի է ստանալ քննութիւնների ծրագիրն եւ Թիֆլիսի Առեւտրական դպրոցի կանոնադրութիւնը: 2—10

**BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie**  
ՖԱՆԱՍԿԱՆ ՆԱԽԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
**Ն. ՊԱԿԵ Ե ԸՆԿ.**  
Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵՅԻՑ ԲԱՐՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթ մի անգամ:  
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէյ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 16/28 փետրվարի ԺՈՐԺԻ չորեքշաբթի, հաւաքեալ ԲՈՒՆԻ: Եւ այսպէս չարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:  
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմասներ տրվում են տոլորականից պակաս գներով:  
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտիքիւնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:  
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ հոսանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալատարներին:  
ԲԱՐՈՒՄԻՄ—պ. Վիկտօր ԴՄԵՆՈՅԻՆ, Նարէքէժնայա: ԹԻՖԼԻՍԻՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեան, Սիմոն փող. Պոլախարովսկոյի եւ Մայսուրաճէի քարվանսարա: ԲԱՅՈՒՆ—հեղ. Վ. եւ Ի. Մոլիսֆեաններին, Նարէքէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27: ՆՕՎՈՐՈՍՍԻՅԱՎ—Վաղիկաւակի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (ե. հ. չ.) 5—20

Лучшая аттестация отъ учебного начальства.  
**И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ.**  
преподаетъ  
Полный курсъ ВУХРАЛТЕРІИ  
ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:  
1) Бухгалтерія (двойная италянская), 2) Коммерческая ариометика, 3) Коммерческая экономія, 4) Ариометика на счетахъ, 4) Торговля и вексельныя узаконенія и 5) Коммерческая корреспонденція.  
Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Больше 1000 окончившихъ курсъ. Михайловская, № 71.  
Собое-венный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.  
Занятія съ января мѣсяца. 28—100  
Годъ занятій десяти.

**ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ**  
Յայտնում է ի գիտութիւն ընդհանուր, որ նրա ատենանում, 1900 թ. ժամար 28-ին, տեղի կունենայ աճուրդ, բերանացի և փակ ծրարներով, ծախելու համար քաղաքապատկան (նախկին Արեւօրօզովի) երկարական ամառանոցը, իր տակի գետնով, որ պարունակում է իր մէջ 203 ջառակուսի սաճէն և գտնվում է Բորժոմ աւանում, Վորոնցովկայա փողոցում, ճեմելքի մօտ:  
Ամառանոցի հետ ծախվում է նաեւ նրա մէջ գտնվող շարժական կայքը, այն է՝ կահ-կարասիք, սեղանատան և խոհանոցի ամանեղէններ: Ամառանոցի հողը տրված է Բորժոմում ամառանոցային հողերով օգտվելու կանոնադրութեան համաձայն, որը հաստատված է նախկին Կովկասի Փոխարքայի կողմից 1851 թ. ղեկավարների 22-ին:  
Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են բոլոր պայմանները տեսնել վարչութեան մէջ ամեն օր, բացի տօն և կիրակի օրերից, առաւօտեան ժամը 10-ից մինչեւ 2-ի: Փակ ծրարները կընդունին 1900 թ. ժամար 28-ին մինչեւ ցերեկվայ ժամը 12-ը և պէտք է պարունակեն իր մէջ 2000 բութի գրաւական, անունը, հօր անունը և ազգանունը և առաջարկել ամենաբարձր գինը: Այն անձնքներին, որոնք բնակվում են Թիֆլիսից դուրս և ցանկանում են ծանօթանալ պայմանների հետ, կարելի է ուղարկել այդ պայմանները (ա. 15) 4—5

**Բժշկարար Կեֆիր եւ Կուլմիս**  
◆ **Օ. ԿՕՐՕՆԱ** ◆  
Թոյլատրված Թիֆլիսի բժշկական բաժանմունքից և որժանցած երկու մէդալներով՝ երկու ցուցահանդէսներում, ընտիր կէֆիր և կուլմիս պատրաստելու համար: Կարելի է ստանալ Օ. Կօրօնայի գործարանում, Լօրիս-Մէլիքեան փողոց, տուն Զուրաբովի և բաժանմունքում, Միքայիլեան փողոց, օֆիցերների անտեսական ընկերութեան խանութին կից:  
Ուսուցիչներին, սւսանողներին և տնտեսական ընկ. անդամներին կը լինի զինում: Զինում կունենան և այն չքաւորները, որոնք կը ներկայայեն բժշկից առանձին գեղատոմս: Ծանկացողներին՝ կէֆիր ու կուլմիս կարելի է տուն ուղարկել: 37—50

Պատրաստում ենք և ցանկացողներին ուղարկում ամբողջ Կովկասում ամենայայտնի Դանձաւարի վաճիք բարահանքից ամենաընտիր տեսակի՝ ՀԱՐԱՐԱՂԻ:  
**— Զ Ր Ե Վ Ա Ց Ե Ք Ե Ր Ե Ր —**  
մատչելի գներով և զանազան մեծութեան:  
Մեր հասցէն, Евлахъ, контора Меликъ-Пашаянъ.  
Որովհետեւ վերջերս, երկուսը են նաեւ ուրիշ հանքերի բարեր, որոնք յատկութեամբ չափազանց են կանգնած, ուստի խնդրում ենք ցանկացողներին դիմել միմիայն մեզ:  
Գարանների կապալաւու՝ Արաւամ Հասան-Ջալալեանց  
39—40